գարշութիւն. բայց կարի զարուագիտութիւն: *5* Դարձեալ ինքն իգանայր այլոց, եւ այսպէս մըմկեալ թաւալեալ էր:

6 Եւ երբեմն իբրեւ զգաց մայր նորա զարուագիտութիւնն, եւ ոչ կարացեալ համբերել պարսաւանացն վատանուանութեանն, ասէ ցսենեկապան որդւոյն իւրոյ, թէ յորժամ նա խնդրեսցէ ի պղծութիւն զարսն՝ ընդ որ սովորն է անկանել, դուք զիս ի ներքս կոչեսջիք: *7* Յորժամ պատանեակն Պապ ինքն ընդ անկողին մտեալ՝ խնդրէր զարսն ի պղծութիւն, եմուտ մայր նորա եւ նստաւ զառաջեաւ նորա՝ իւր որդւոյն: *8* Ապա սկսաւ ճչել վայել պատանեակն, եւ ասէ ցմայր իւր. Յարիցես գնասցես ի բաց, զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ[1], թէ ոչ յարիցես գնասցես ի տանէս: *9* Իսկ մայրն ասէ՝ թէ ոչ գնացեալ ելից ի տանէ աստի: *10* Իսկ նա հաղ քան զհաղ ճչէր, բազմացուցանէր զվայելն: *11* Իսկ մայրն նայեցեալ տեսանէր աչաւք իւրովք աւձք սպիտակք, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք, եւ ճապատէին ի վերայ պատանեկին Պապայ, մինչ դեռ ընգողմանեալ էր նա. կայր ի մահիճսն, վայէր եւ խնդրէր զպատանեակսն ընդ որ սովորն էր գիտանալ: *12* Իսկ մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գիտաց թէ նոքա են, որ ի կերպարանս աւձիցն ճապատէին զորդւովն իւրով. յարտասուս հարեալ՝ ասաց. Վա՜յ ինձ, որդեակ իմ. զի քեզ տագնապ էր, եւ ես ոչ գիտէի: *13* Յարուցեալ գնաց եթող զտեղին, կատարել զպէտս ցանկութեանն: *14* Եւ այսպէս դիւաւք վարեալ, յայսպիսի գործս զամենայն աւուրս կենաց իւրոց ըմբռնեալ Պապն որդին Արշակայ, մինչ եհաս ի թագաւորութիւնն, մինչեւ ի մահ իւր:

ԳԼՈՒԽ ԽԵ.

1 Յաղագս Սակստան անդերձապետի, որ առաքեցաւ ի Շապհոյ թագաւորէն Պարսից չորեքհարիւր հազարաւ, եւ փոխոյց եւս զնա Վասակ զաւրավարն Հայոց:

2 Ապա յետ այսորիկ ժողովեաց թագաւորն Պարսից Շապուհ զզաւրս իւր, եւ հազարս չորեքհարեւր. եւ Սակստան անդերձապետ զաւրագլուխ նոցա: *3* Ապա խաղացին գնացին ի կողմանս Հայոց. եկին ծաւալեցան ճակատեցան ընդ թագաւորութեանն Հայոց Արշակայ: *4* Ապա ի մի վայր եկեալք ամենայն մեծամեծք նախարարացն Հայոց, խորհուրդ խորհէին. քանզի ոչ առնուին յանձն երբէք, թէ թագաւորն Արշակ մտցէ ընդ նոսա ի պատերազմ: *5* Ապա զաւրավարն Վասակ, հանդերձ ամենայն մեծամեծաւքն եւ նախարարաւքն ամենայն Հայոց մեծաց, հարկանէր սատակէր զամենայն զաւրսն Պարսից: *6* Եւ սպանանէր Սակստան անդերձապետն. բայց միայն ապրէր Մերուժանն Արծրունի փախուցեալ:

---

1 *Օրինակ մի յաւելու՝* ճայթիմ